ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 81

«17» 08 2020 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պարտականությունների կատարումը վարչության պետի տեղակալ Վազգեն Հարությունյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 13.07.2020թ. N 227-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու ու Կարեն Ավագի Գաբրիելյանին Շիրակի մարզի դատախազի պաշտոնից փոխադրելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 14.08.2020թ. N 257-Ա և 258-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Վ.Հարությունյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում, իսկ Կ.Գաբրիելյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Մելքոնյան Դավիթ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Հակոբյան Արման - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով

Մարտիրոսյան Հայկ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ
Հովսեփյան Մարո -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Առաքելյան Ռուզաննա -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի ավագ մասնագետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ